ՀՏԴ 82

ԱՐՑԱԽԸ ՊԼԱՏՈՆ ԶՈՒԲՈՎԻ «ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ» ՎԵՊՈՒՄ (ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ (ՅԱՆ) ԵՐԿՐՈՐԴ ԿԵՐՊԱՐԸ)

Զ.Վ.Առաքելյան-Բալայան

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Հոդվածում՝ Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպի սյուժեի և կերպարների համակարգում, առանձնացրված է մելիք Շահնազարի(յան)ի կերպարը

Հերմենևտիկ եւ աքսեոլոգիական հոլովույթներում քննելով հայ գաղափարաբանության բաղադրյալը, դիտարկելով հայոց պետական նության եւ պետական գիտակցության վերաբերյալ յուր հայեցումները Ս. Սարիբեկյանը նկատում է մի կարեւոր հանգամանք. « ...Դարեր շարունակ զրկված ենք եղել միասնական կենտրոնացված ազգային պետականությունից, սակայն մեր պատմության դարերը մշտապես կապակցված են եղել ինքնիշխան միավորներով, որոնք կարծես պահպանում էին պետականության հուշը: Այս տեսակետից բացառիկ արժեք է *ներկայացնում հատկապես Արցախի մելիքությունների պատմությունը ...»*[1]:

... Արցախի մելիքություններ ...

Երեւույթ, որ թերեւս հայոց ազատատենչ, տիեզերական ոգու, երբեմնի անկախության ոգիսկանի մի փայլուն էջն է ներկայացնում, որպես հայի արցախյան կերպի սուբստանցի հաստատում...

Արցախի մելիքություններ... Հայկական անկախ պետականության վերջին մոհիկաններ... պատմության փիլիսոփայության դառը սարկազմ...

1881թ. ձեռնարկած ճանապարհորդությունը, որի ընթացքում Ռաֆֆին կշրջագայեր Գանձակի, Միսիանի, Բարդյուշատի, Զավանդուրի, Ղափանի, Մեղրիի, Օրդուբադի, Հին – Նախիջեւանի ու հատկապես Ղարաբաղի, Սյունյաց գավառները, մտահոգված էր ուսումնասիրել Արցախի մելիքության ժամանակների պատմությունը: «Երկու ամիս Արվանից եւ Սյունյաց աշխարհում» ուղեգրությունում ամփոփելով յուր տպավորությունները, Ռաֆֆին ուղղակի նշում է յուր պատմա գեղարվեստական, գրողական նպատակը՝ «գլխավոր նպատակներից մեկը»՝ «հայոց հին մելիքությունների մասին պատմական տեղեկություններ հավաքելը»[2]:

Վիպասանը հայտնի «Հառաջաբան»-ում, ավելի է հստակեցնում միտքը. «Պատմական վիպասանին նյութ է մատակարարում ինքը պատմությունը եւ այն հիշատակարանները, որ պահել են իրանց մեջ անցյալի հիշատակարանները եւ ավանդել են ապագա սերնդին»[3]:

Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» թարգմանելուց նա խոսում է յուր նպատակի շուրջ.... «ծանօթացնել հայ հասարակութիւնը այդ գեղեցիկ աշխատութեան հետ, որի նիւթը առնված լինելով Ղարաբաղի մելիքների կեանքից, հարկավ, մեզ, հայերիս համար, սէտք է շատ հետաքրքիր լինի...[4]» Անմիբանությունն ու ներքին երկպառակությունները մահացու վերքեր ընդունելով հայկական մելիքական իշխանությունների անկման ժամանակ, Զուբով հեղինակը ընդհանրացնում է, որպես երկի գլխավոր գեղարվեստական, պատմական, փիլիսոփայական նպատակ ընդունելով հետեւյալը Վարանդայի մելիք Շահնազարյանի խորհրդածություններում. «Մենք, միայն Ղարաբաղի լեռնական մելիքներս, պահպանեցինք մեր անկախությունը ... եւ դա միայն նրանով, որ Խամսայի բոլոր հինգ մելիքները միացած էին բարեկամության եւ արձան ամուր դաշնակցությամբ: Նրանց յաջբրդները հետեւեցին նախորդների օրինակին, եւ մեր հայրենիքի անկախությունը պահպանվեցաւ», այս դիտույթից Ռաֆֆին նզրահանգում է. «Ցոյց տալ դրանց վնասակարար հետեւանքները, և կացուցանում է «Ղարաբաղի աստղագետի» գլխաւոր նպատակը»: Պ. Զուբովի վեպի պատմական ժամանակների ամփոփական շարունակությունը հասնիսացող Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն եւս (հանձինս մեծ լուսավորիչ, դեմոկրատ Խ.Աբովյանի) ունի իր գեղարվեստական ծրագիրը և նպատակը. գլխավոր հերոսը Աղասին, բացում է գրողի 30 տարվա փակ բնրանը ... Աբովյանը շատ և շատ արժեքների հետ նկատում է. «Ով չի՝ ուզիլ լսել՝ թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ի՞նչ գատ են ... »[5]:

Անշուշտ, մեծ հայրենասերը նախանձախնդիր կերպով վեպում մեջիմաստավորում է թվարկված արժեքները ...

Հիշենք, Աբովյանը եւս անկախության ոգին ինքնիշխանության, պետականության բարձրակետ ընդունելով, վեպի էջերում օրինակ բերելով հիշեցնում էր հայկական մելիքությունները,նրանց երեւելի առաջնորդներին ..

Հիրավի, պատմության փիլիսոփայության կարգն ուսուցանող է, եւ սկսած Պ.Զուբովի «Ղարաբաղի աստղագետիցից», ապա, աստիճանական

ֆարգով, Ռաֆֆու «Խամսայի մելիքությունները»-ից», Մ. Բարխուդարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ից, Լեոյի «Մելիքի աղջիկը» պատմվածքից. մեր ժամանակներում Գր. Դիզակի «Արցախցիներ» վեպից, Վ.Օհյանի «Ղարաբաղի արծիվը» վեպից, ապա նաեւ Բակուր Կարապետյանի «Հարյուր տարվա մենություն» պատմական ուսումնասիրությունից, ուր հեղինակը փորձում է Ռաֆֆու հետքերով ճանապարհորդելով 1-դարյա հնությունից վերակենդանացնել Արցախյան (եւ ոչ միայն), հայոց աշխարհի մելիքությունների վարքագրությունը, (նաեւ Բակուրի «Ծոյի քերդաքաղաք» երկից և այլն) եզրահանգում ենք. այս հեղինակները երիցս գերնկռիր և նպատակ են ընդունել դարերի հեռավորությունից վեր հանել հայոց պետականության վերջին մոհիկանների՝ արցախյան մելիքությունների, բարդյական, քաղաքական վարքագիծեր եւ ցույց տալ նախնիների կատարած հերոսական առաքելությունը, նրանց հետնորդների անմիաբանության հետեւանքով ստեղծված ծանր վիճակը, որոնք նախնիների ուղուց շեղվելով դարձան հայոց պետականության ձիրենու վերջին շյուղերը կտրող թույլ օղակներ...

Մեծ ֆրանսիացին՝ Հիպոլիտ Տենը, քննելով գրողի գլխավոր խնդրի բարդույթը, իրավ, այսպիսի դրույթ է նշում. «Գրողի գլխավոր խնդիրը կենդանի հոգիների պատկերումն է"[6]: Հարկավ, Զուբովը ստեղծել և հետեւել է «կենդանի հոգիներ պատկերելու» սկզբունքին...

Մինչ «Ղարաբաղի աստղագետը» վեպի կերպարների համակարգը ներկայացնելը, փորձենք ցույց տալ հեղինակի գլխավոր նպատակը՝ հարաբերության մեջ առնելով այլ հեղինակների, այլ գործեր նաեւ, այժմ քննենք երկի գլխավոր գաղափարը, որ հղացել է, այսինքն ցույց տանք նրա էական հատկանիշը... Սա այն վիճակն է՝ քննվող նյութի ատաղձը, որից բխում են երկի մնացած բոլոր հատկությունները...

Գրիգոր Արծրունին ազգասիրության ասպետը այսպես է մեկնաբանում. «Ազգասիրությունը այնպիսի զգացում է, որով մարդը պարտավորվում է «օգտավետ» լինել յուր հասարակությանը... ազգին»[7]: Դիտարկենք Զուբովի հերոսների քննակարգը, պարզաբանենք, արդյո՞ք, նրանք նույնքան փորձ են անում լինելու ազգասեր, եւ արդյո՞ք, տենչան դրույթով հեղինակին հաջողվե՞լ է պատկերել «վենդանի հոգիներ...»:

Մինչ կերպարների քննական համակարգը շարադրելը, նշենք Մարինյանի դիտույթը. «1882թ. Ռաֆֆին թարգմանում է ռուս հեղինակ Պ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպը: Նա հիացմունքով է խոսում վեպի մասին, որը արտացոլում է Ղարաբաղի հայերի նահապետական կենցաղը, ազատասիրական ոգին եւ այն երկպառակությունները, որոնք ջլատում են մելիքների միասնությունը եւ լուրջ հարված հասցնում նրանց հզորությանն ու անկախությանը...»[8]:

Դե ինչ, պատմական երեւույթների ներքին բարդույթի, նրա օրինաչափությունների ու օբյեկտիվ դրդապատճառների քննությանը զուգահեռ դիտարկենք վեպի կերպարների համակարգը, որին անդրադարձել ենք մասնակիորեն նաեւ սյուժեի համակարգի քննությանը զուգահեռ...

Մելիք Շահնազարյան՝ Վարանդայի տիրապետող և վեպի տիպական համակարգի կենտրոնական հերոսը, պատմականորեն Ղարաբաղի Վարանդայի մելիքության հերոսական այր Հյուսենիկի որդի Շահնազար II, որը մի գիշերվա մեջ կոտորեց ավագություն ունեցող մելիք Հովսեփին՝ եղբորը, եւ նրա գերդաստանը, որից մի մանուկի փախցրին Խաչենի մելիքություն, պապի հովանավորությանը հասցնելով... Զուբովի «Ղարաբաղի աստղագետ»-ում չի նշված այս մասին: Նշանակում է պատմական եւ վիպական փաստերը այս կարգում չեն հարաբերվում..., ինչպես նկատում ենք...

Վեպի առաջին մասից Զուբովի քննմամբ մելիքի հզորության բարդույթն է ցուցված...

Մելիք Շահնազարյանի աթոռանիստը պատմականորեն 1500-ամյա հնությամբ Ամենտարանոցն է, որը ներկայացված է որպես Զանախչի բերդ...

Շահնազարյանը յուր մելիքական հզորությամբ հանդերձ, որ ներկայացվում է վիպական շրջափակներում, առաջին իսկ պահերից ցուցվում է որպես մի տիպ, որը անկարող է յուրովի, ինքն իրեն մշակել, ծանր ու թեթեւ անել որոշակի գաղափարներ ու գործել անկախ գիտակցությամբ... Ամբողջ վեպի ընթացքում բնավորության այս գիծը անփոփոխ է նրա մոտ, և իր նրկվությամբ անցումները կերաբարային մերիվայրումներ է ունենում: Դա հեղինակի գրողական ոճի կանխամտածված ելադրույթ հանգամանքներից է, գավաթի է, բայց կերպային պատմական կոլորիտ ստեղծելու ցուցվող միտում: Գրողը ստեղծում է վիպական բարդ պահեր, հնարանքներ, և ընթացքը հետամուտ է դեպքերի զարգացման անցումներում գտնել յուր պատասխանները: Դրանք Զուբովը արագությամբ չի բացում...

Զուբովը մելիքի տիպային անցումներում երբեմնակի, ճիշտ դատողությունների է գնում իր իսկ հերոսի ներքին քննությամբ. օտարածին, օտարաշուրթ ամեն ինչ սպանեցուցիչ է ուրույն խառնվածք ունեցող, ճակատագրի տվյալ դժվա-

ռագույն ժամանակի մեջ գտնվող հայկական մելիքների, իշխանների համար, բայց որքան էլ դառը, պարադոքսը իրական է նույնքան, որքան որ հասանը մելիք Շահնազարյանի գուշակն է. «Ահա՛ ինչ է նշանակում պարսիկների ազդեցությունը, որը խիստ զգալի է դարձել Ղարաբաղի վրա... Քրիստոնեայ լինելով հանդերձ, հաւատում ենք նախասահմանութեան... Այժմ մենք մեծ չափով մահմեդական նախապաշարմունքներ ենք ընդունել և համարեա կէս մահմեդականներ ենք դարձել։ Դրանով պարսիկները և թուրքերը հայոց ամբողջ թագաւորութիւնը կարողացան բաժանել իրենց մէջ։ Մենք, հայոց մելիքներս, միայն մնացել ենք անվայլ մեր լեռների մէջ։ Այդ խիստ ցաւալի բան է։ Միշտ կորոստաբեր է լինում այն թուլութիւնը, երբ մի ժողովուրդ ընդունում է սովորութիւններ օտարներից»[9]:

Թերևս, մելիք Շահնազարյանը, որ ստանձնել էր նորոր որդու խնամակալությունը, պոռթկաց Ջումշուդի համառությունից.

-Ստիպել ինձ երդմնազանց լինել, յաւիտեան կռուցնել ինձ Խամսայի բոլոր մելիքների հետ,- այդ բոլորը քո աչքում ոչինչ բան է երևվում,- պոռթկաց մելիքը Ջումշուդի անորոշության դեմ:

Մելիք Շահնազարյանի համար հաճելի է զգալ, որ յուր նախնյաց արիությունը ժառանգել է նաև Ջումշուդը.

«-Ես մեծ բաւականութեամբ եմ տեսնում, սիրելի Ջումշուդ, որ հերոսների արիւնը վազում է քո երակների մէջ...»[10]

Ուրեմն, եթե հարկ պահանջվի, Ջումշուդը կարող է նաև ձեռք բերել կլասիցիստական հերոսին հատուկ գծեր, քանզի նա ունի նախնիներից եկող հերոսականություն. պատմականորեն առասպելականացած պատկեր՝ մելիք Հյուսեինը, հորաքույրը՝ Գայանենը, տատը՝ Աննա խաթունը, նրա եղբայրը՝ մելիք Ավանը, բոլորը՝ հայրենիքի նվիրյալներ էին...

Ջումշուդը հաստատամիտ է, բայց... փիլիսոփայում է հորեղբայրը՝ Շահնազարյանը, այն մելիքը, որի ավանդական հոգեբանությամբ՝ մեծ արյունահեղություն կլինի, եթե տարիներ առաջ տված երդումը (Ջումշուդի համար հարս բերել Թալիշի մելիքի աղջկան) չկատարի...

-...Իւրաքանչիւր մարդ պէտք է յարմարվի հանգամանքների հետ,- իրոք, պատմականորեն մելիք Շահնազարը հարմարվող եղավ հանգամանքներին, հայրենիքի շահը երկրորդական պլան մղվեց և մելիքներին հարվածելու համար դաշնակցեց Փաշայի հետ..., Ղարաբաղի ճակատագրի համար դառնալով մեծ պատուհաս,- իսկ միպական համակարգում նրա խոսքերը այլ, ընդհանուրից օտարման շերտեր չեն հնչում:

- Երկպառակությունը և ներքին կռիվները ոչնչացրին հայոց թագաւորութիւնը, որ մի ժամանակ ծաղկած էր և կանգնած էր խիստ նշանաւոր աստիճանի վրա՝ հին թագաւորութիւնների շարքում...,

-Արդ, ինչու հայոց այրերը չկարողացան այս ցեղի ազգածին պատենցիալը չկորցնել, վառ պահելով ցեղի գաղափարական բարձրակետը՝ արիության ամենարտաքոյ, քանզի, եթե արարվեց հրաշակերտը, աստվածային բարձունքների տիպ-գերական անձիրների հասավ ոգեղեն կայծկլտումներ ամփոփող ազգի հինգերորդ ամենարտաքոյ՝ մշակույթը, հաճախակի գենք դառնալով, ապա, պետք է հզոր Վահագնից եկող արիությունը աստվածային զայրույթը պահել, պատկանել ընդդեմ թշնամյաց... բայց, երբ հայը կարողանում էր ազատվինել իր իմաստությանը, քնազգին, ուժին, հերոսությանը, ազատասիրությանը, ապա զորեղ էր, զորեղ՝ հզորների մեջ, հզորների շարքում... աստվածահաճո... «մենք պետք է դիմագրավենք ճակատագրական ադեսը, գաղափարորեն կրենք ցեղահաղորդության դավանանքը...»,- դիտում է Մարիկյանը արժանավորելով հայի միակ ճիշտ դիմադիր, ցեղածին կերպը...

- Մենք, միայն,- շարունակում է վարանդայի մելիքը,- Ղարաբաղի լեռնական մելիքներս, պահպանեցինք մեր անկախությունը: Մեր նախնեաց քաջագործությունները յարգված էին մինչև անգամ Շահ - Աբաս մեծից,- սրանք ճշմարտություններ են փաստացի, պատմականորեն հարթերվող բարդույթ, որին հանդիպում ենք հիշատակարաններում, մատենագիրների՝ Առ. Դավրիժեցու, Զ. Սարկավագի, Գ.Ռ. Դարանաղցու և այլոց մոտ, քրոնիկներում, օտար աղբյուրներում..., - նա՝ Շահ-Աբասը, Վարանդայի, Գիլիստանի, Թալիշի (այս սխալ դրույթ՝ Թալիշը և Գուլիստանը նույն աշխարհագրական սոցիկտերն են, մենք քննել ենք այսմեջի համակարգում) և Խամսայի մնացած մելիքներին ավելի գերադասեց, քան այդ ժամանակ Հայաստանը կառավարող հայոց միաս իշխանական տոհմերի ներկայացուցիչներին: Նա թույլ տուեց մեզ մնալ անմատչելի, և շնորհեց «մելիք» - (թագավոր), նշանաւոր կոչումը, որը մենք այժմ կրում ենք,- հետաքրքիր հեղինակային հայեցումների է մեկնվում Ջութովը, այս բացառիկ կարևոր պատմական ճշմարտությունները տեղադրելով միպական մի այնպիսի տիպիկ կերպարային որակումներում, ինչպիսինն է մելիք Շահնազարյանը, թերևս այս դիտանցքը ունի հեղինակային, յուր փիլիսոփայական հանգումներին բնորոշող նպատակային կշռույթ... Այսպես դատողը թերևս շատ դժվարությամբ պիտի այլ հոգեբանական անցումի հանգի՝ ընդհատյալ օտարման շերտեր կրելով յուր հասարակական ու մասնավոր ըմբռնումներում, ...հերոսի՝ մելիքի, համար նս

ննդկայի համեմատությամբ պարադոքսալ է անցյալից եկող ընտրանքը,- բայց ինչո՞վ մեր նախնիքը կարողացան այնպես յաջողությամբ պատերազմել այդ մեծ թագավորի դէմ... - սա, միաժամանակ, Զուլշոդին ապացուցվող կշռույթի հաջորդ երեսն է՝ մենք պէտք է արյունով միանանք, որ ընբռնենք մեր հաստատակամությունը ընդհանուրի հանդեպ,- Միայն նրանով, որ Խամսայի բոլոր հինգ մելիքները միացած էին բարեկամութեան և արյան ամուր դաշնակցութեամբ: - Այս տիպի, և ընդհանրապես, մելիքական իշխանությունների բարոյական, սոցիալական, հոգեբանական, տոհմային ներքին որակների ուսումնասիրելու և արյան ամուր դաշնակցությունը՝ է, իրոք, պատկերը, որի հաջորդ մեխանիզմի մասին խոսք չի ասվում, իսկ եթե այս մելիքների հարաբերություններում բացակայում են արյունակցական կապերը, ապա պէտք է մոռացվի՞ հայրենասիրության, հայրենիքի փրկության կատեգորիան,- նրանց յաջողդները հետնվէցին նախորդների օրինակին և մեր հայրենիքի անկախությունը պահպանվեցա...,- ահա մտահանգումը, որից անդին դեռևս ցուցում չունի այս տիպը, հնդինկանը, գտնում է, որ եթե այս չափանիշով գնահատենք հայոց արցախական հատվածի մելիքների ամբողջությունը, թերևս, այս աշխարհագրական տարածքում չհայտնվեր այնպիսի բախտախնդիրը, ինչպիսին Փանահն էր և նրա նմանները...

Վերջապես, կային ընտրագոյններ ազատության ու հայրենիքի փրկությանը ուղղորդվածներ, ամենտական դաժանությամբ ուխտյալներ,բայց...

Զուրովը, իրոք, բարությամբ հանդերձ, մելիք Շահնազարյանին դիտում է որպես պնտական իշխանական դասի մի անձնավորություն, որի համար փույթ չէ մելիքությունների միջև եղած սուր վեճերը, տարաձայնությունները: Անշուշտ, Զուրովը գիտեր պատմական մելիք Շահնազարի տիպը, նրա եղբայրասպանության պատճառով մելիքական տների միջև ծագած արյունահեղ ընդհարումները և... գուցե խոհեմություն է համարում, որ մելիքները այդքան սուր չփորձեին պատժել մելիք Շահնազարյանին, առաջնային շահ ընդունելիս հայրենիքի անդորրությունը... այո՛, հոգեբանական նման անցումներով է ցանկանում միպական դեպքին ընթացք տալ, սա Զուրովի ընկալած պատմության փիլիսոփայությունն է, չպետք է արյունը արյունով մաքրել, եթե խոսքը վերաբերում է հայրենիքի բարօրությանը, իսկ մեր ծնունքանքը լիիրավ է և երևույթը գաղափարախոսության տանող ճանապարհը՝ ցուցող. «Մեր ողբերգության գիտակցումը ցնդի ոգու ձգտումն է՝ Միացյալ և Անկախ հայրենիքի ստեղծման...»[11]: Մելիք Շահնազարյանը, որ պատմականորեն իշխանատեսնչ է, ինքնահավան,ամբարտավան, հարազատի արյուն թափող՝ ավագ մելիքությունը ստանալու համար, օտարին գործակից է, մելիքների ամբողջությունը ջլատող: Զուրովի պատմավեպում նա ցավով է ընկալում դեպքերի հնարավոր բարդացումները,նրանից առաջացող վեճերը,դրանց հետևող արյունահեղությունները «Մնացած մելիքները ստիպված կը լինեն բռնել՝ ոմանք մեր, ոմանք նրա /Թալիշի մելիքի/կողմը,-շարունակում է համոզել Զուլշոդին մելիք Շահնազարյանը,- Ղարաբաղը կը դառնայ ներքին արյունահեղության ամոթալի մի հանդիսարան...»[12]:

Ամփոփում

XIX դարի տես գրականության և մշակույթի նշանավոր գործիչ Պատոն Զուրովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը մեկնված և արժեքաբանված է լայն պատմաբանասիրական ու տեսաբանական լույսի տակ, պատմական 1750-1826-ական թթ. և 1826-1828թթ. տես-պարսկական պատերազմի ընդգրկումով:

Ուսումնասիրությունը կատարված է այսօրվա ու կերպարների համակարգի համադրական ու հակադրական բարդույթի քննությամբ, որի առանձնահատված օրակներից է մելիք Շահնազար(յան)ի կերպարի վերհանումը:

Резюме

Роман известного писателя и деятеля русской культуры XIX века Платона Зубова " Карабахский астролог" разъяснен и оценен в историческом и филологическом аспекте в связи с событиями русско-персидской войны 1826 - 1828гг.

Вромане изображены исторические события 1750-1828гг.

Исследование проведено в рамках сюжетно-образной и сравнительно-противопоставительных аспектах, причем одним из важных является анализ образа главного героя романа Мелика Шахназара.

Գրականություններ

1.Մարինյան Ս.,Հայկական գաղափարաբանություն, Ե. 1998, էջ 284 :
2. « Լումա », 1896, գիրք Ա, էջ 103 :
3.Ռաֆֆի, Հայ քննադատության քրեստոմատիա, հ.2, էջ 95:
4. Զուրով Պ. ,էջ 1:
5. Աբովյան Խ., ԵԿԺ,հ. 3, էջ 2:
6. Տեն Հ., Գեղարվեստի փիլիսոփայությունը, էջ 9:
7.Գ. Արծրունի, Իդեալիստներ, Հայ գրական քննադատության քրեստոմատիա, հ. 2, էջ 111:
8. Սարինյան Ս., Ռաֆֆի, էջ 211:
9. Զուրով Պ., «Ղարաբաղի աստղագետը», էջ 3,4,8:
10.Զուրով Պ., էջ 12-13:
11.Մարինյան Ս., Հայ գաղափարաբանություն, էջ 132:
12. Զուրով Պ., էջ 16: